ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Կայացավ 19 նոյեմբերի 2021թ. ժամը 11:00 **ք. Սպիտակ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ՝ Գոռ Բարսեղյանը, Մանվել Խոյեցյանը, Տիգրան Հակոբյանը, Կարեն Մխիթարյանը, Հովհաննես Շիրոյանը (առցանց), Համլետ Պողոսյանը, Գարիկ Սահակյանը (առցանց), Վարուժան Սահակյանը, Հայկ Սիսակյանը:

Բացակա էին՝ Սարգիս Թամամյանը, Ռազմիկ Թումանյանը, Լուսինե Մաթոսյանը, Գրիգոր Նազարյանը, Մկրտիչ Շուշանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Ազգանուշ Ֆրանգյանը, Վարուժան Ապրեսյանը, Էդգար Թորոսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արտակ Մաթոսյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ազգանուշ Ֆրանգյանը:

ԼՍԵՑԻՆ

Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալ Արտակ Մաթոսյանը ներկայացրեց Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 19-ի արտահերթ նիստի օրակարգի նախագիծը:

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ և առարկություններ չեղան:

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 19-ի արտահերթ նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1.Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականիդեկտեմբերի 30-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկուցող՝ Վ. Ապրեսյան/

2.Սպիտակ համայնքի սեփականության 2021 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

/Զեկուցող՝ Ա. Մաթոսյան/

3.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի «Ղազանչի» հանդամասի անվանումը փոխելու առաջարկություն ներկայացնելու մասին

/Զեկուցող՝ Է. Թորոսյան/

Օրակարգը դրվեց քվեարկության

ԿՈՂՄ-9 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է:

ԼՍԵՑԻՆ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 69-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՎԱՐՈՒԺԱՆ ԱՊՐԵՍՅԱՆ/

Զեկուցողը նշեց, որ ներկայացված որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Սպիտակ համայնքի 2021 թվականի վարչական և ֆոնդային բյուջեով չնախատեսված ծախսերի ֆինանսավորման անհրաժեշտությամբ:

Նա նշեց, որ որոշման նախագծի ընդունման նպատակն է.

1. Ս.Ավետիսյան 17 և Ալեք Մանուկյան 14 բազմաբնակարան շենքերի էներգախնայողության, ջրավազանի համաշինարարական, լոկալ օպտիկական ցանցի և համայնքի փողոցային լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների պետության կողմից հատկացվող սուբվենցիաի ֆինանսավորումը,

2. Ֆոնդային բյուջեով չնախատեսված ծախսերի ֆինանսավորումն ապահովելը,

3. Ուսանողների տեղափոխման պայմանագրի ֆինանսավորումն ապահովելը:

Զեկուցողը ներկայացրեց որոշման նախագծի ակնկալվող արդյունքը, այն է՝

1. որոշման նախագծի ընդունման արդյունքում հնարավոր կլինի իրականացնել 2021 թվականի բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորունը,

2. Սպիտակ համայնքիԿենտրոն-1 թաղամասի լուսավորության ապահովումը,

3. համայնքի ուսանողների անվճար տեղափումը Վանաձոր քաղաք:

Հարցեր, առաջարկություններ, առարկություններ չեղան:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 69-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն 1, 2 և 3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նախագիծը դրվեց քվեարկության, անցավ միաձայն

ԿՈՂՄ-9 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է:

ԼՍԵՑԻՆ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ/

Զեկուցողը ներկայացրեց նախագիծը՝ կից հավելվածներով:

Առաջարկություններ, առարկություններ չեղան, հարցեր չտրվեցին:

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի սեփականության 2021 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն 1-7 հավելվածների:

ԿՈՂՄ-9 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՂԱԶԱՆՉԻ» ՀԱՆԴԱՄԱՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈԽԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԷԴԳԱՐ ԹՈՐՈՍՅԱՆ/

Զեկուցողը նշեց, որ հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի «Ղազանչի» հանդամասի անվանումը օտար անուն է, միևնույն ժամանակ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ժամանակ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի «Ղազանչի» հանդամասում գործել է «Հեքիաթ» պիոներական ճամբար, անհրաժեշտություն է առաջացել առաջարկություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի «Ղազանչի» հանդամասի անվանումը «Հեքիաթ» հանդամասի փոխելու համար:

Հարցեր չտրվեցին, առարկություններ չեղան:

Ղեկավարվելով «Աշխարհագրական անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի «Ղազանչի» հանդամասի անվանումը օտար անուն է, միևնույն ժամանակ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ժամանակ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի «Ղազանչի» հանդամասում գործել է «Հեքիաթ» պիոներական ճամբար՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Առաջարկություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի «Ղազանչի» հանդամասի անվանումը «Հեքիաթ» հանդամասի փոխելու համար:

Նախագիծը դրվեց քվերակության, անցավ միաձայն:

Որոշումն ընդունված է

ԿՈՂՄ-9 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ-0

ԳՈՌ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ԽՈՅԵՑՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐՈՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ _____ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ